Կազմված է 02.11.2015 թ. և բաղկացած է 3 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
04.11.2015 թ. թիվ 3113-Ա հրամանով

Առողջապահության նախարար՝
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 05.09.1995 թ.,
գրանցման թիվ 264.140.01712
վկայական 01 Ա 016493
հարկ վճարողի հաշվառման համար՝ 00011624
29.04.2002 թ. գրանցված կանոնադրության
թիվ 005.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից "02" 12 2015 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝
Կ. Ադամյան

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(փոփոխություն)

ք. Երևան – 2015 թ.

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.1. կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» և «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 852-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 27.12.2000 թ., պետական գրանցման համարը՝ 286.120.04083, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01502205, գտնվելու վայրի հասցեն՝ 0001, ՀՀ, ք. Երևան, Թումանյան 8) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ՀԽՍՀ առողջապահության նախարարության 1956 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով հիմնված, ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1992 թ. մարտի 2-ի թիվ 9/12 որոշմամբ գրանցված (վկայական 100) «Առողջապահություն» հանդեսի խմբագրության վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը»:

2. Ընկերության կանոնադրության 2.2. կետը լրացնել նոր ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«- գրքերի, բրոշուրների, բուկլետների, գովազդների հրատարակում և վաճառք,

- բժշկական հանրամատչելի գիտելիքների տարածում բնակչության շրջանում, նախաբժշկական օգնության համար անհրաժեշտ կարողությունների ուսուցում, առողջության պահպանման, օրգանիզմի կոփման և առողջ ապրելակերպի քարոզչությանը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս բնակվող հայ (սփյուռքահայ) ընթերցողների շրջանում,

- բժշկությանը վերաբերվող հոդվածների, գրքերի, բրոշուրների հրատարակում՝ նպաստելով բժիշկների և միջին բուժանձնակազմի գիտելիքների և գործնական

կարողությունների մակարդակի բարձրացմանն ու մասնագիտական փորձի փոխանակմանը,

- պատճենահանման աշխատանքների իրականացում (առողջապահության համակարգի գործունեության կազմակերպման վերաբերող հրամանների, որոշումների, մեթոդական ցուցումների բազմացում և տարածում),
- պարբերականի ինքնուրույն բաժանորդագրության և առաքման աշխատանքների իրականացում,
- մասնակցություն Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հանրապետական նշանակության բժշկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- մասնակցություն առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսավարման ժամանակակից մոդելների, մեխանիզմների ու նորմատիվների մշակմանն ու ներդրմանը,
- արտասահմանյան երկրների առողջապահական և այլ հիմնարկների, ընկերությունների, կազմակերպությունների հետ համագործակցություն:»:

3. Ընկերության կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **310,005,000** (երեք հարյուր տաս միլիոն հինգ հազար) դրամ, որը կազմում է 62,001 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5,000 դրամ:

Բոլոր 62,001 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է՝ ՀՀ առողջապահության նախարարությունը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության 29.04.2002 թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունները գրանցվել են 25.09.2007 թ., 05.03.2010 թ., 25.02.2011 թ. և 26.12.2011 թ.) բաղկացուցիչ մասը: